

ջին համաստեղութիւնները ամենն ալ տեսանելի չեն կոստանդնուպօլսի կլիմային տակն :

Հարաւային Պատկ : — Մանր աստղերէ կը ձևանայ պատկաճէ՝ Աղեղնաւորէն վար :

Կոռունկն : — Հարաւային Զկան վարը, երկու աստղ ունի ո. և Յ երկրորդ կարգի և ուրիշ մըն ալ Յ երրորդ կարգի :

Փիւնիկ : — Քառանկիւնի ձևով երրորդ կարգի աստղերէ կը կազմուի՝ Արքառնարէն վեր :

Սիրամարգ : — Աստղ մ'ունի ո. երկրորդ կարգի՝ Աղեղնաւորէն վար . և նոյն գծին վրայ, ալ աւելի վար, երեք աստղ Յ, և ծ երրորդ կարգի :

Տորատ : — Ծրի խաւարման հարաւային բևեռը այս համաստեղութեան վըրայ է. աստղ մ'ունի միայն երրորդ կարգի և ուրիշ մանր աստղեր :

Ասոնք են հարաւային գլխաւոր համաստեղութիւնները . կը մնան Հարաւային Եռանկիւն, Թուշական Զուկն, Հնդիկ, Հարաւային Ճանճ, Արու Հիդրա, Գետնառիւծ, և այլն . բայց հարաւային բևեռին մօտերը գտնուելով մեր կլիմայից տակն անտեսանելի են, անոր համար աւելորդ է անոնց վրայ խօսիլ: Հարաւային բևեռական աստղն է օ Ոգդանդին, և բևեռին կիտէն հեռու է իրը 36° 40'' :

ՔԱՐԱՉԻԹ ԵՒ ՄԵԱԿՈՒԹԻՒՆ . — Քարածիւթը դիւրին և զօրաւոր միջոց մ'է տունկերն և արտորէից բերքերն ճճիներէն պահելու: Ուրիշ բան պէտք չէ բայց եթէ քարածիւթը այս ինչ չափով ջրոյ հետ խառնել և սրսկել վնասակար ճճեաց գտնուած տեղը: Քարածիւթոյ հոտէն և ներքին զօրութենէն այս կենդանիներն մէկէն կը մեռնին, և ընդ հակառակն նորէն կըսկսին աճիլ և կենդանանալ այն բոյսերն ու տունկերն որ ցամաքելու վրայ էին: Մէկ մաս քարածիւթը պէտք է խառնել հարիւր մաս ջրոյ հետ, որպէս զի համեմատական ըլլայ խառնուրդը և ոչ նուազ կամ աւելի:

ԿԱՑՆԱԿ ԼՈԽԱՆԿՄՐԻՉ . — Ռաբէլ կը պատմէ որ յամին 1833 տղայ մը ծառի մը վրայ ելած ըլլալով թռչնոյ բոյն մ'առնելու համար, ծառը կայծակէն կը զարնուի ու տրղան վախէն կամ ցնցմունքէն ծառէն վար կ'իյնայ: Բայց ինչ զարմանք երբ տեսանք տղունկուրծին վրայ տպաւորուած ծառին, թռչնոյն, բունոյն և մինչեւ իսկ այն ճիւղին պատկերը՝ որոյ վրայ կեցած էր:

— Օրիոլի ասոր նման ուրիշ դէպք մ'ալ կը պատմէ, և կ'ըսէ որ յամին 1847 երբ տիկինն Մորոզա փոթորկի ատեն պատուհանի մը մօտ նստեր էր, սաստիկ ցնցմունք մը կը զգայ առանց վնասի. և պատուհանի մէջ դրուած ծաղկին պատկերը կը տպաւորուի սըրունիցը վրայ և ցմահ կը մնայ:

ՀՐՈՅ ՔԱՐԱՅԵՐ. — Զարմանալի և անհիմանալի բան մ'է թէ ինչպէս աշխարհիս ամեն կողմը գանուին հրաբխային լերինք և Ափրիկոյ մէջ միայն չգտնուուին, գոնէ այն կողմերն որ մեզի ծանօթ են. մինչդեռ գիտեմք որ մերձակայ Համբարձման, Երկարի և Դենէրիֆֆա կղզեաց մէջ առատութեամբ կան: Բայց վերջերս Ափրիկոյ արեմտակողմը ուղեորող ճանապարհորդաց ըսածին համեմատ՝ Մարոքըոյի երկրին մէջ ֆէս քաղքին մօտ քարայր մը կայ որ բոց կ'արձակէ, և մօտերն կարգէ դուրս ու հետաքրքրական երևոյթներ կ'երևին:

Քարայրին բարձրութիւնն ամենաոչինչ է. բերանը հինգ մեդր երկայնութիւն և չորս մեդր լայնութիւն ունի:

Բոցն առանց ընդմիջելու շարունակ կ'արձակի, երբեմն սաստկութեամբ և երբեմն ոչ. բայց որ զարմանալին է, միշտ հորիզոնական ձևով, և ելլելու միջոց միշտ սուր ձայն մ'ունի, որ ըստ առատութեան բոցն կը նուազի կամ սաստկանայ: Բայց ամենևին ոչ լավա դուրս կ'արձակէ, ոչ հանքային քար, և ոչ որ և է նիւթ:

Օդոյ փշմունքն որ կը մղէ զբոցն բերնէն դուրս ելլելու, բաւական զօրութիւններն, մինչեւ հիմա որոշ և գոհացուցիչ արդիւնք մը չունեցան. սակայն հաւանօրէն կը կարծուի որ այն լերան մէջ որուն վրայ բացուած է այս քարայրս, հրացեալ վիճակի մէջ հանքածիոյ առատ խաւեր ըլլան: Օդոյ ընթացքն այս ածուխը միշտ վառ պիտի պահէ, և քանի որ տեսէ ածուխն, բոցն ալ միշտ պիտի տեսէ:

Այս երեսութիս սկիզբը ու պատճառը իմանալու համար եղած քննութիւններն, մինչեւ հիմա որոշ և գոհացուցիչ արդիւնք մը չունեցան. սակայն հաւանօրէն կը կարծուի որ այն լերան մէջ որուն վրայ բացուած է այս քարայրս, հրացեալ վիճակի մէջ հանքածիոյ առատ խաւեր ըլլան: Օդոյ ընթացքն այս ածուխը միշտ վառ պիտի պահէ, և քանի որ տեսէ ածուխն, բոցն